«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ Fax: +374 10 564111 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/1470

«30» 09 2020թ.

«ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ՝ Է.ՓՈԹՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Փոթոյան,

Համաձայն «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ և «Աիդա Թրեյդ» ՍՊ ընկերության միջև 2019 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ «ԳՀԱՊՁԲ-2020/16-3-ԵՊԲՀ-4» պայմանագրի /այսուհետ՝ պայմանագիր/, որն ուժի մեջ է մտել սույն թվականի հունվարի 29-ին կնքված թիվ 1 համաձայնագրով, Ձեր ընկերությունը, Համալսարանի կողմից ներկայացված պահանջներին համապատասխան, պարտավորվել է 20 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պահանջված ապրանքները:

Սույն թվականի փետրվարի 28-ից մինչև մարտի 16-ը Ձեր ընկերությանն է ներկայացվել ապրանքների մատակարարման թվով 4 պահանջ, համաձայն որոնց ապրանքների հանձնման վերջնաժամկետն ավարտվել է ապրիլի 4-ին: Այնուհետև, Ձեզ հետ գրավոր և բանավոր բազմաթիվ բանակցություններից հետո, երբ ընդունելով երկրում հայտարարված արտակարգ դրությունը՝ Ձեզ տրվել է մատակարարման ողջամիտ ժամկետ, մինչև օրս ունենք պահանջված և չմատակարարված ապրանքների հետևյալ պատկեր.

Չ/հ	Ապրանքի անվանում	Պահանջված քանակ	Չ/մ	Չմատակարարված քանակ
14	Հողաթափիկ /բախիլ/ վիրաբուժական	30000	զույգ	26500
32	Սավան ներծծող գլանափաթեթ 50սմx50մ	1000	հատ	1000
51	Տեսատպիչի թուղթ 110մմx20մ	50	հատ	50
72	Բինտ 7մx14սմ, ոչ ստերիլ	37000	հատ	36400

Վերոգրյալով պայմանավորված և առաջնորդվելով «ԳՀԱՊՁԲ-2020/16-3-ԵՊԲՀ-4» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությամբ՝ Համալսարանն լուծում է Ձեր կազմակերպության հետ 27.12.2019թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-2020/16-3-ԵՊԲՀ-4» ծածկագրով պայմանագիրը չմատակարարված չափաբաժինների ամբողջ մնացորդային մասով:

Հինք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Կից ներկայացվում է պատասխանատու ստորաբաժանման գրությունը:

Առդիր 5 թերթ:

ՌԵԿՏՈՐ՝ Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

«Երևանի Մխիթար Հերացու անվան

պետական բժշկական համալսարան»

հիմնադրամի ռեկտոր

պարոն Ա.Ա.Մուրադյանին

ԵՐԵՎԱՆԻ Մ.ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎ. ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄՈՒՏՔ թիվ 12664
«25» 09 2020թ.

Հարգելի պարոն Մուրադյան

Հայտնում ենք Ձեզ, որ համաձայն «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Միդա Թրեյդ» ՍՊ ընկերության միջև 2019 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված թիվ N «ԳՀԱՊՁԲ-2020/16-3-ԵՊԲՀ-4» գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագրի Գնորդի (ԵՊԲՀ) կողմից պահանջ ներկայացնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում Մատակարարը («Միդա Թրեյդ» ՍՊԸ) պարտավորվում է մատակարարել պահանջում առկա ապրանքը՝ համապատասխան բանակով: Տվյալ պայմանագրի շրջանակներում «Միդա Թրեյդ» ՍՊ ընկերությանը 05.02.2020թ. ներկայացվել է ապրանքների մատակարարման պահանջ թիվ 1-ը, 28.02.2020թ. ապրանքների մատակարարման պահանջ թիվ 2-ը, 02.03.2020թ. ներկայացվել է ապրանքների մատակարարման պահանջ թիվ 3-ը և 16.03.2020թ. ներկայացվել է ապրանքների մատակարարման պահանջ թիվ 4-ը, որոնց մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել՝ թիվ 1 պահանջի համար՝ 24.02.2020թ., թիվ 2 պահանջի համար՝ 18.03.2020թ., թիվ 3 պահանջի համար՝ 21.03.2020թ. և թիվ 4 պահանջի համար՝ 04.04.2020թ. (կից աղյուսակով ներկայացված են N1, N2, N3 և N4 պահանջները): Մատակարար կազմակերպության կողմից մինչ օրս՝ 24.09.2020թ. դրությամբ իրականացվել է այդ պահանջներում առկա ապրանքատեսակների մասամբ մատակարարում (կից աղյուսակով ներկայացվում են մատակարարված և չմատակարարված ապրանքատեսակները):

Տեղեկացնում ենք նաև, որ 30.03.2020թ. պատասխանատու ստորաբաժանման կողմից ծանուցվել է «Միդա Թրեյդ» ՍՊ ընկերությանը (այսուհետ Մատակարար) պահանջներում առկա չմատակարարված ապրանքատեսակների մատակարարման ժամկետների ճշտման հետ կապված, որին ի պատասխան Մատակարարի կողմից ներկայացվել է, որ մատակարարման ժամկետները դեռ անորոշ են (հաշվի առնելով երկրում և աշխարհում տիրող արտակարգ իրավիճակը): Մատակարարի պատասխանից ելնելով տևական ժամանակ ԵՊԲՀ-ի կողմից բազմաթիվ անգամներ բանավոր փորձ է արվել ստանալ տեղեկատվություն չմատակարարված ապրանքատեսակների մատակարարման ժամկետների վերաբերյալ, սակայն որևէ հստակ պատասխան չի ներկայացվել:

Սեպտեմբեր ամսվա սկզբին հայտնի դառնալով, որ 12.09.2020թ. ավարտվում է ՀՀ-ում տիրող արտակարգ դրությունը պատասխանատու ստորաբաժանումը մեկ անգամ ևս՝ 08.09.2020թ. գրությամբ դիմել է Մատակարարին, ապրանքների մատակարարումների մասին որևէ տեղեկատվություն ունենալու համար: Պատասխանատու ստորաբաժանման գրությանն ի պատասխան Մատակարարը միայն ներկայացրել է ԵՊԲՀ-ի կողմից իրենց ժամկետանց դրամական պարտավորությունների մասին: Չնայած այն հանգամանքին, որ N «ԳՀԱՊՁԲ-2020/16-3-ԵՊԲՀ-4» գնման պայմանագրի 6.5 կետում հստակ նշված է, *որ վաճառողն*

իրավունք ունի պատվիրատուի կողմից պայմանագրով նախատեսված վճարման ժամկետի խախտման համար պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկել տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, ինչը և կարող էր անել Մատակարարը, ԵՊԲՀ-ի կողմից 15.09.2020թ. իրականացել է ամբողջական պարտքի մարում:

16.09.2020թ. պատասխանատու ստորաբաժանման կողմից արդեն երրորդ անգամ գրավոր ծանուցվել է Մատակարարին չմատակարարված ապրանքների մատակարարումների ժամկետների հետ կապված, և Մատակարարին տեղեկացվել, որ իր կողմից վաղուց սպառվել է թիվ N «ԳՀԱՊՁԲ-2020/16-3-ԵՊԲՀ-4» գնման պայմանագրի 2.1 կետով սահմանված ժամկետը (*Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի*), ինչպես նաև այն, որ մատակարարին բազմիցս բանավոր ծանուցվել է այդ ապրանքատեսակների խիստ անհրաժեշտության մասին, և տրվել է ևս 5 օրացույցային օր ողջամիտ ժամկետ Աղյուսակով ներկայացված ապրանքատեսակների մատակարարումները մնացորդային մասով իրականացնելու համար, հակառակ դեպքում կկիրառվեն պայմանագրով ամրագրված դրույթները: Մատակարարի կողմից Աղյուսակում ներկայացված ապրանքատեսակներից 23.09.2020թ. մատակարարվել է «Գիպսակապ բժշկական 3մx20սմ» ապրանքատեսակից՝ 1900 հատ «Հերացի» թիվ 1 հիվ. համալիր, և 1400 հատ «Մուրացան» հիվ. համալիր: Մնացած ապրանքատեսակների մասով մատակարարում չի իրականացվել:

Հաշվի առնելով պայմանագրով նախատեսված չմատակարարված ապրանքատեսակների խիստ անհրաժեշտությունը և գնման հրատապությունը, խնդրում ենք Ձեզ ձեռք առնել համապատասխան միջոցներ այս ամենին օրենսդրական կարգով լուծում տալու հարցի վերաբերյալ:

Աղյուսակ

Ապրանքների մատակարարման պահանջ N 1						
<<Հերացի>> թիվ 1 հիվանդանոցային համալիր						
Չ/Հ	Գնման առարկայի անվանում	Արտադրող երկիր	Չ/Մ	Միավորի գին	Քանակ	Գումար
14	Հողաթափիկ /բախիլ/ վիրաբուժական	Գերմեն	զույգ	6.2	20000, որից մատակարարվել է թվով՝ 2500 զույգ	124,000.00
32	Սավան ներծծող գլանափաթեթ 50սմx50մ	Ֆարմասինո	հատ	900	50 չի մատակարարվել	45,000.00
<<Մուրացան>> հիվանդանոցային համալիր						
Չ/Հ	Գնման առարկայի	Արտադրող երկիր	Չ/Մ	Միավորի գին	Քանակ	Գումար

	անվանում					
14	Հողաթափիկ /բախիլ/ վիրաբուժական	Գերմեն	զույգ	6.2	10000, որից մատակարարվել է թվով՝ 1000 զույգ	62,000.00
32	Սավան ներծծող գլանափաթեթ 50սմx50մ	Ֆարմասինո	հատ	900	50 չի մատակարարվել	45,000.00

*Մատակարարման վերջնաժամկետ՝ ըստ պայմանագրի գնման ժամանակացույցի (24.02.2020թ.)

Ապրանքների մատակարարման պահանջ N 2						
<<Հերացի>> թիվ 1 հիվանդանոցային համալիր						
Հ/Հ	Գնման առարկայի անվանում	Արտադրող երկիր	Չ/Մ	Միավորի գին	Քանակ	Գումար
51	Տեսատպիչի թուղթ 110մմx20մ	Տիանժին	հատ	2990	50 չի մատակարարվել	149500
72	Բինտ 7մx14սմ, ոչ ստերիլ	Տեքստիլ	հատ	83	20000, որից մատակարարվել է թվով՝ 300 հատ	1660000
88	Գիպսակապ բժշկական 3մx20սմ	Ֆարմասինո	հատ	274.93	500 մատակարարվել է	137465

<<Մուրացան>> հիվանդանոցային համալիր						
Հ/Հ	Գնման առարկայի անվանում	Արտադրող երկիր	Չ/Մ	Միավորի գին	Քանակ	Գումար
72	Բինտ 7մx14սմ, ոչ ստերիլ	Տեքստիլ	հատ	83	17000, որից մատակարարվել է թվով՝ 300 հատ	1,411,000.00
88	Գիպսակապ բժշկական 3մx20սմ	Ֆարմասինո	հատ	274.93	500 մատակարարվել է	137,465.00

*Մատակարարման վերջնաժամկետ՝ ըստ պայմանագրի գնման ժամանակացույցի (18.03.2020թ.)

Ապրանքների մատակարարման պահանջ N 3						
<<Հերացի>> թիվ 1 հիվանդանոցային համալիր						
Հ/Հ	Գնման առարկայի անվանում	Արտադրող երկիր	Չ/Մ	Միավորի գին	Քանակ	Գումար
32	Սավան ներծծող գլանափաթեթ 50սմx50մ	Ֆարմասինո	հատ	900	800 չի մատակարարվել	720,000.00

<<Մուրացան>> հիվանդանոցային համալիր						
Հ/Հ	Գնման առարկայի անվանում	Արտադրող երկիր	Չ/Մ	Միավորի գին	Քանակ	Գումար
32	Սավան ներծծող գլանափաթեթ 50սմx50մ	Ֆարմասինո	հատ	900	100 չի մատակարարվել	90,000.00

*Մատակարարման վերջնաժամկետ՝ ըստ պայմանագրի գնման ժամանակացույցի (21.03.2020թ.)

Ապրանքների մատակարարման պահանջ N 4						
<<Հերացի>> թիվ 1 հիվանդանոցային համալիր						
Հ/Հ	Գնման առարկայի անվանում	Արտադրող երկիր	Չ/Մ	Միավորի գին	Քանակ	Գումար
88	Գիպսակապ բժշկական 3մx20սմ	Ֆարմասինո	հատ	274.93	2000 մատակարարվել է	549 860

<<Մուրացան>> հիվանդանոցային համալիր						
Հ/Հ	Գնման առարկայի անվանում	Արտադրող երկիր	Չ/Մ	Միավորի գին	Քանակ	Գումար
88	Գիպսակապ բժշկական 3մx20սմ	Ֆարմասինո	հատ	274.93	1500 մատակարարվել է	412 395

*Մատակարարման վերջնաժամկետ՝ ըստ պայմանագրի գնման ժամանակացույցի (04.04.2020թ.)

Հարգանքով՝

Բժշկական գործիքների և պարագաների պատասխանատու ստորաբաժանման կազմ

Ղեկավար՝ Արմենակ Բդոյան

Անդամ՝ Ամալյա Գրիգորյան

Անդամ՝ Անահիտ Օհանյան

«25» սեպտեմբերի 2020թ.